17.11.2017թ.

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ-ՈՒՂԵՐՁԸ ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Սիրելի ուսանողներ

Իմ, համայնքի ղեկավարի աշխատակազմի և ավագանու անունից շնորհավորում եմ ձեզ Ուսանողության միջազգային օրվա առթիվ:

Օրը համախմբում է նաև բոլոր ժամանակների ուսանողներին, ովքեր վեհ նպատակների, առաջադեմ գաղափարների և լուսավոր ձգտումների կրողներն են:

Ուսանող լինելը պատիվ է և պատասխանատվություն, իսկ ուսանողությունն էլ ցանկացած երկրի շարժիչ ուժն է և ապագայի երաշխավորը: Թե ինչպիսին կլինի մեր պետության ապագան, կանխորոշվում է հենց այսօր ձեր շնորհիվ:

Ես վստահ եմ՝ սևանցի ուսանողներն էլ ուսանողության ստվար բանակի առաջամարտիկներից են և իրենց գիտելիքներով, իմացությամբ, քաղաքացիական դիրքորոշմամբ ասում են իրենց խոսքը և բուհական կյանքում, և հասարակական ասպարեզում:

Հայոց բանակում ծառայող տղաների շարքերում էլ ուսանողներն են, ովքեր թողնելով ուսանողական լսարանները, մեկնել են հայրենիքի նկատմամբ իրենց պարտքը կատարելու, պաշտպանելու մեր երկրի սահմանները: Նրանց՝ խաղաղ և անվտանգ ծառայություն, բարի վերադարձ:

Սիրելի ուսանողներ,

Դուք ոչ միայն ձեր ընտանիքների, այլ նաև մեր երկրի ու համայնքի հպարտությունն եք: Այսօրվա ուսանողն առավել հաստատակամ է ու կազմակերպված, հասարակական-քաղաքական իրադարձությունների կիզակետում է և կարողանում է դիմակայել ժամանակի մարտահրավերներին: Սա միաժամանակ ձեր դերի և երկրի կյանքում ունեցած ներդրման վկայությունն է:

Իմ կրտսեր բարեկամներ

Մեր երկրի, համայնքի վաղը կանխորոշվելու է ձեր նպատակներով, ձգտումներով, գիտելիքներով, մասնագիտական բարձր որակներով, ձեր առողջ մտածողությամբ և հստակ դիրքորոշմամբ:

Ես ցանկանում եմ ձեզ վստահություն սեփական ուժի նկատմամբ, հաստատակամություն, կրթական, գիտական նորանոր բարձրունքներ, կենսասիրություն և սեփական երկրի տերը լինելու մեծագույն պատիվ և պատասխանատվություն: